LARISA AVAGYAN
Management, Bachelor's Degree, 3rd Year

PUBLIC DEBT MANAGEMENT ISSUES IN THE POST-CRISIS PERIOD

Keywords: *government debt, GDP, advanced economic growth, export-import, exchange rate*

2020 was marked by two external shocks in the history of Armenia: the COVID-19 pandemic and the war against Azerbaijan worsened the economic situation of the country. The government debt of the Republic of Armenia has crossed the red line since 2020, reaching a risky level, violating the golden rule of fiscal budget, exceeding the threshold of 60% of GDP. In this article, we look at the public debt / GDP ratio for 2006-2020, identifying the most important public debt service issues, while emphasizing exchange rate and the vision of ensuring progressive export-based economic growth in terms of public debt.

ՄԱՐԻԱՄ ԲԱԴՈՅԱՆ
Կառավարում,
բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *տնտեսական անկում, տնտեսական աճ, կորոնավիրուսային համավարակ, աճի տեմպ*

2020 թվականին ի հայտ եկած կորոնավիրուսային համավարակը մեծ ազդեցություն ունեցավ ՀՀ տնտեսության վրա: Սույն հետազոտության մեջ վեր են հանվել կորոնավիրուսային համավարակի պայմաններում ՀՀ տնտեսության մեջ ծագած խնդիրները, դրանց հետևանքները տնտեսական ակտիվության ցուցանիշների վրա, անդրադարձ է կատարվել ՀՀ Կառավարության ձեռնարկած հակաճգնաժամային ծրագրերին, դրանց արդյունավետությանը: Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ տնտեսությունը խորապես տուժել է համավարակից, հատկապես՝ ծառայությունների և առևտրի ոլորտը, իսկ ՀՀ Կառավարության իրականացրած հակաճգնաժամային ծրագրերը ցանկալի արդյունք չեն տվել:

Ներածություն: 2020 թվականը լի էր անակնկալներով թե՛ Հայաստանի և թե՛ ամբողջ աշխարհի համար: Կորոնավիրուսային համավարակը, սկսվելով 2019 թ. վերջին ամիսներին և մեծ թափով տարածվելով 2020 թ. ընթացքում, զգալի ազդեցություն ունեցավ կյանքի բոլոր ոլորտների վրա: Այն տնտեսական, սոցիալական, քաղաքական, բարոյահոգեբանական ճգնաժամերի հանգեցրեց ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Նման պայմաններում պետության գլխավոր խնդիրը արագ արձագանքելը և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելն էր:

2020 թ. մարտի 16-ին ՀՀ-ում հայտարարվեց արտակարգ դրություն, ինչի հետևանքով մի շարք սահմանափակումներ դրվեցին. Ժամանակավորապես դադարեցվեցին գործարանների աշխատանքները, փակվեցին խանութներ, առևտրի կենտրոններ, ժամանցի վայրեր, բնակչության որոշ հատված անցավ հարկադրված պարապուրդի: Այս ամենը, բնականաբար, չէր կարող իր բա-

ցասական ազդեցությունը չունենալ տնտեսության վրա: Թեման արդիական է այնքանով, որ թեև իրականացվել և իրականացվում են հակաճգնաժամային միջոցառումներ, այնուամենայնիվ, կորոնավիրուսային համավարակը դեռևս շարունակում է սպառնալիք հանդիսանալ ՀՀ տնտեսության համար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշները մինչև համավարակը և համավարակի պայմաններում:

Գրականության ակնարկ: Համավարակի ընթացքում տնտեսական դրությունը վերլուծելու և աճի պատճառները բացահայտելու համար կատարվել են ուսումնասիրություններ, որոնցից է «Կորոնավիրուսի ազդեցությունը և հետևանքները ՀՀ տնտեսության վրա, դրանց վերացման կանխատեսումները» հոդվածը: Հեղինակը՝ Աշոտ Օսիպյանը, անդրադարձել է կորոնավիրուսի ազդեցությանը ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների, բանկային համակարգի վրա, ՀՀ Կառավարության հակաճգնաժամային միջոցառումներին, ինչպես նաև՝ համավարակի ազդեցությանը համաշխարհային տնտեսության վրա: Հետազոտության արդյունքում հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությանը. «Պանդեմիայի ընթացքում գործող ընկերությունները կարիք ունեին որոշ վճարումների հետաձգման՝ հարկային, մաքսային, կոմունալ: Սակայն կառավարությունը հարկային և մաքսային վճարումների հետաձգում չկիրառեց՝ խուսափելով բյուջեի մուտքերի կրճատումից: Գյուղատնտեսության ոլորտին օժանդակության ծրագրերը էականորեն չեն տարբերվում նախորդ տարիներին իրականացվածներից: Տեղին կլիներ ՀՀ Կառավարության կողմից օժանդակությունների միջոցով արդյունավետ գյուղատնտեսության զարգացման խրախուսումը: Սա պետության համար կունենար երկարաժամկետ արդյունք: Covid-19-ի հետևանքով առաջացած ճգնաժամը կարող է մեր երկրում տնտեսության կառուցվածքի փոփոխման և արդյունավետության բարձրացման խթան հանդիսանալ»[1]: «Լույս» հիմնադրամի կողմից ՀՀ պետական բյուջեի վերլուծության շրջանակներում անդրադարձ է կատարվել համավարակի ընթացքում ՀՀ տնտեսական դրությանը, պետական բյուջեի եկամուտներին և ծախսերին: Ուսումնասիրելով տնտեսական ակտիվության ցուցանիշները, ինչպես նաև մակրոտնտեսական այլ ցուցանիշներ, «Լույս» հիմնադրամը եկել է հետևյալ եզրահանգմանը. «Թեև ՀՀ տնտեսությունը թևակոխել է աճի տիրույթ, տնտեսության վերականգնում դեռևս տեղի չի ունեցել: Ավելին, տնտեսության ակտիվացումը օր օրի արագանալու փոխարեն ավելի ու ավելի է դանդաղում: Տնտեսության տարբեր ճյուղերում գրանցված աճերը հիմնականում պայմանավորված են 2020-ին գրանցված խոր անկումներով և արտացոլում են բազայի էֆեկտը»[2]:

Տնտեսական դրությունը վերականգնելու նպատակով 2021 թ. փետրվարի 4-ին ՀՀ Կառավարությունը հաստատեց «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին»[3] որոշումը: 2021 թ.

---

[1] Կորոնավիրուսի ազդեցությունը և հետևանքները ՀՀ տնտեսության վրա, դրանց վերացման կանխատեսումները, հոդված, հեղ.՝ Աշոտ Օսիպյան, https://www.kas.de/documents/269781/0/Die+wirtschaftlichen%2C+rechtlichen+und+gesellschaftspolitischen+Ver%C3%A4nderungen+in+Armenien+aufgrund+von+COVID-19.pdf/cbab5ac9-7cb1-00e2-1e4a-4e5380280fc6?version=1.2&t=1599474150327

[2] «Լույս» հիմնադրամի՝ ՀՀ պետական բյուջեի մասին վերլուծությունը, https://www.luys.am/img/artpic/small/46d401cbcea3f84677e3Budget-2021-24-08-2021final.pdf

[3] Տե՛ս «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը հաստատելու մասին» որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149837

փետրվարի դրությամբ գործող փոխվարչապետ Տիգրան Ավինյանը հանդես է եկավ հոդվածով, որտեղ անդրադարձավ ծրագրում ներառված 38 միջոցառումներից 4-ին՝ գյուղատնտեսական նոր՝ բարձր ավելացված արժեք ձևավորող մշակաբույսերի աճեցման և վերամշակման մեկնարկ, պետական գնումների ընթացակարգերում հակաճգնաժամային միջանկյալ ժամանակավոր գործիքի ներդրում, կորոնավիրուսի համավարակի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների շարունակում և վերափոխում, խոշոր քաղաքաշինական ծրագրերի մեկնարկ՝ Երևանում և Հայաստանի համայնքներում[1]: Ըստ Ավինյանի՝ այս 4 կետերը կազմում են ծրագրի առանցքը, և դրանց իրագործմամբ է պայմանավորված ծրագրի հաջողությունը:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության մեջ տնտեսական ակտիվության ցուցանիշների հավաքագրման համար հիմք են ծառայել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված վիճակագրական տվյալները: Հետազոտության համար անհրաժեշտ են նաև ՀՀ ֆինանսների նախարարության 2016-2021 թթ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները: Այս տվյալների հավաքագրումը կարևոր է այնքանով, որքանով հնարավորություն կընձեռի համեմատական վերլուծության միջոցով ի ցույց դնել տնտեսական ակտիվության ցուցանիշները մինչև համավարակը և համավարակի պայմաններում:

Վերլուծություն: 2020 թ. զարգացումները մեծ շեղում արձանագրեցին բոլոր կանխատեսումներից, քանի որ 2019 թ. դրությամբ ոչ ոք պատկերացում չուներ COVID-19-ի և դրա հետևանքների մասին: 2020 թ. փաստացի գրանցվել է համաշխարհային տնտեսության 3.3% անկում, այն դեպքում, երբ 2019 թ. վերջում կանխատեսվում էր 3.4% աճ: ՀՀ-ում 2020 թ. նույնպես գրանցվեց ավելի քան 7,6% տնտեսական անկում, մինչդեռ 2020 թ. պետական բյուջեով կանխատեսված էր 4,9% տնտեսական աճ: Թեև 2021 թ. համավարակը դեռևս շարունակում էր ազդել տնտեսության վրա, այնուհանդերձ, գրանցվեց տնտեսական ակտիվության ցուցանիշի 4,4% աճ: Հասկանալու համար, թե մինչև համավարակը տնտեսությունն ինչպիսի միտումներ է ունեցել, ներկայացնենք 2016-2020 թթ. ՀՀ տնտեսության վերաբերյալ տվյալներ:



Գծապատկեր 1. ***ՀՀ տնտեսական աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ[2]***

[1] Տե՛ս **Տ. Ավինյան**, «Տնտեսական արձագանքման ծրագրի և առաջիկա 6 ամսում կառավարության անելիքների մասին» հոդվածը, https://banks.am/am/news/interviews/20764

[2] Գծապատկերը մշակել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած պետական բյուջեի հաշվետվությունները, https://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2016-2019 թթ. ընթացքում բացառապես տնտեսական աճ է գրանցվել՝ չնայած 2016-ի աճի շատ դանդաղ տեմպերին: 2016 թ. ունեցել ենք 0,2% աճ, 2017, 2018, 2019 թվականներին՝ համապատասխանաբար 7,5, 5,2 և 7,6% տնտեսական աճ, իսկ 2020-ին՝ 7,6% անկում: Հասկանալու համար, թե տնտեսական ակտիվության ցուցանիշներից (ՏԱՑ) յուրաքանչյուրն ինչպես է ազդել տնտեսական աճի կամ անկման վրա, գծապատկեր ներմուծենք հետևյալ տվյալները:



Գծապատկեր 2. ***ՀՀ տնտեսության ճյուղերի նպաստումները տնտեսական աճին,%***[1]

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 2016 թ. տնտեսական աճը պայմանավորված է եղել արդյունաբերական արտադրանքի ծավալի 6,7%, առևտրի շրջանառության 1%, ծառայությունների 7.1% աճով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալները նվազել են 5%-ով, շինարարության ծավալները՝ 10,8%-ով[2]: 2017 թ. գրանցվել է աճի համեմատաբար բարձր տեմպ, որը պայմանավորված էր հիմնականում ծառայությունների (14,4%), առևտրի (14%) և արդյունաբերության (12,6%) բարձր աճով: Իսկ գյուղատնտեսությունը (2,9%) և շինարարությունը (2,2%) դեռևս շարունակում էին դանդաղ տեմպով աճ գրանցել[3]: 2018-ին տնտեսության զարգացումն ընթացել է դանդաղ տեմպերով՝ 2,3 տոկոսային կետով ցածր ցուցանիշ գրանցելով նախորդ տարվա նկատմամբ: Աճին նպաստել են առևտրի և ծառայությունների, արդյունաբերության և շինարարության ճյուղերը՝ համապատասխանաբար 8,7, 18,8, 4,3, 4,5%-ով, իսկ գյուղատնտեսությունն աճի վրա ունեցել է բացասական ազդեցություն՝ նվազելով 7,3%-ով[4]: Ի տարբերություն 2018-ի՝ 2019 թ. տնտեսությունն սկսեց ավելի արագ տեմպերով զարգանալ: Չնայած գյուղատնտեսության 3,8% նվազմանը՝ տնտեսական աճին նպաստել են արդյունաբերության 9%, շինարարության 4,6%, առևտրի 8,9% և ծառայությունների 15% աճը[5]: Ըստ

[1] Գծապատկերը մշակել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած պետական բյուջեի հաշվետվությունները, https://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/

[2] Տե՛ս Պետական բյուջեի հաշվետվություն (2016 թ. տարեկան), https://minfin.am/hy/page/_petakan_byujei_hashvetvutyun_2016_t_tarekan_

[3] Տե՛ս Պետական բյուջեի հաշվետվություն (2017 թ. տարեկան), https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2017_t_tarekan_

[4] Տե՛ս Պետական բյուջեի հաշվետվություն (2018 թ. տարեկան), https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2018_t_tarekan_

[5] Տե՛ս Պետական բյուջեի հաշվետվություն (2019 թ. տարեկան), https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2019_t_tarekan

վերոնշյալ տվյալների՝ տնտեսության առաջընթացը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների ոլորտով, պակաս ազդեցություն են ունեցել արդյունաբերության և շինարարության ոլորտները, իսկ գյուղատնտեսությունը շարունակում է շատ քիչ ներդրում ունենալ տնտեսության զարգացման գործում: Տնտեսական կանխատեսումներն ամբողջովին փոխվեցին 2020 թվականին, քանի որ տնտեսական աճի փոխարեն ունեցանք տնտեսական խոր անկում, ինչը պայմանավորված էր գրեթե բոլոր ոլորտների ցածր ցուցանիշներով: Մեծապես տուժեցին առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտները՝ նվազելով համապատասխանաբար 4,4, 14,7 և 9,5%-ով: Արդյունաբերության ոլորտում գրանցվեց 0,9% նվազում: Չնայած գյուղատնտեսության ավելացված արժեքի անկմանը՝ համախառն արտադրանքն իրական արտահայտությամբ աճել է 1,5%-ով[1]: Բնականաբար, նշված ոլորտների այսօրինակ ցուցանիշները համավարակի, ինչպես նաև Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքներն են:

Համավարակի պայմաններում կիրառվեցին սահմանափակումներ, փակվեցին մի շարք միջպետական սահմաններ, ինչի հետևանքով կրճատվեցին առևտրի շրջանառության ծավալները, որոնք հիմնականում պայմանավորված էին մեծածախ և մանրածախ առևտրի, ինչպես նաև ավտոմեքենաների առևտրի ծավալների նվազմամբ: Մեծապես տուժեց ծառայությունների ոլորտը, մասնավորապես՝ մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղը, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը և տրանսպորտը: Նման պայմաններում 2020 թ. մարտի 26-ին ՀՀ Կառավարությունը հանդես եկավ հակաճգնաժամային ծրագրով, որը համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների հաղթահարման համար նախատեսում էր ավելի քան 150 մլրդ ՀՀ դրամ, որից 25 միլիարդը ուղղվելու էր տնտեսական ծրագրերի իրականացմանը: ՀՀ Կառավարության կողմից ներկայացված հակաճգնաժամային միջոցառումներից 9 ունեին տնտեսական բնույթ, որոնցից 5-ը իրագործվել է միանվագ դրամաշնորհների միջոցով, որոնք անհատույց են և բացասական հետևանք են թողնում բյուջետային հաշվեկշռի վրա: Մյուս միջոցառումները վարկավորում էին հիմնականում գյուղատնտեսության ոլորտը և ՓՄՁ-ներին: Այսինքն, կառավարությունը նախատեսել էր աջակցություն տրամադրել կա՛մ միանվագ դրամաշնորհների, կա՛մ վարկավորման պայմանների փոփոխության տեսքով: Սակայն կառավարության նման նախաձեռնությունը պարունակում էր մեծ ռիսկեր. ինչպես արդեն նշվեց, միանվագ դրամաշնորհները բացասաբար են անդրադառնում բյուջետային հաշվեկշռի վրա, և քանի որ տնտեսավարող սուբյեկտները գտնվում էին անորոշությունների մեջ՝ պայմանավորված համավարակի անկանխատեսելի զարգացումներով, առաջ էր գալիս այն հարցը, թե արդյոք կկարողանա տնտեսավարող սուբյեկտը ճգնաժամի պայմաններում ստանձնել վարկային պարտավորություններ՝ չունենալով ապագայի վերաբերյալ հստակ պատկերացումներ: Քանի որ կորոնավիրուսային համավարակի զարգացումներն անկանխատեսելի էին, կառավարության արձագանքը պետք է լիներ չափազանց արագ և թիրախավորված: 2020 թ. խոր տնտեսական ճգնաժամից հետո 2021-ի առաջին ինն ամիսներին համաշխարհային տնտեսությունը, այդ թվում՝ ՀՀ տնտեսությունը, թևակոխեց տնտեսական աճի վերականգնման փուլ:

---

[1] Տե՛ս Պետական բյուջեի հաշվետվություն (2020 թ. տարեկան), https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2020_t_tarekan_



Գծապատկեր 3. ***Տնտեսության ճյուղերի իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ***[1]

2021 թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գրանցվեց տնտեսական ակտիվության ցուցանիշի 4.4% աճ, ինչը հիմնականում պայմանավորված էր առևտրի (6,4%) և ծառայությունների (5,4%) աճով: Շինարարությունը նույնպես գրանցեց աճ՝ 6,4%, սակայն այն հիմնականում պայմանավորված էր բյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով: Համեմատաբար դանդաղ տեմպով է աճել արդյունաբերության ծավալը՝ գրանցելով 0,7% աճ: Գյուղատնտեսությունը, թերևս, մնացել է այն ճյուղը, որը կա՛մ գրանցում է աճի ցածր տեմպեր, կա՛մ, առհասարակ, նվազում է: Այս ժամանակահատվածում գյուղատնտեսության ծավալները նվազել են 1,3%-ով՝ հիմնականում պայմանավորված բուսաբուծության նվազմամբ: Այսինքն, տնտեսական աճին հիմնականում նպաստել են ոչ արտահանելի ոլորտները: Սակայն, ԵԱՏՄ երկրների և տարածաշրջանի մյուս երկրների համեմատությամբ, տնտեսության աճի ցածր տեմպերի ցուցանիշներով Հայաստանը զիջում է միայն Ղրղզստանին, իսկ մյուս երկրները ոչ միայն հաղթահարել են ճգնաժամը, այլ նաև գրանցել տնտեսական աճի բարձր տեմպեր: ՀՀ-ում դեռևս չի գրանցվել այնքան տնտեսական աճ, որքան տնտեսական անկում էր գրանցվել: Այսինքն, 2021 թ. ցուցանիշները համեմատելով 2020 թ. ցուցանիշների հետ՝ տնտեսական աճ ենք արձանագրում անկման ֆոնին: Սակայն, եթե համեմատությունը կատարում ենք մինչև համավարակը տարբեր տարիներին գրանցված տնտեսական աճի ցուցանիշների հետ, ապա տնտեսական աճի մասին խոսելը ոչ այլ ինչ է, եթե ոչ անհեթեթություն: Հարկ է նշել նաև, որ 2021 թ. տնտեսական աճը պայմանավորող գործոնների որոշ մասը տնտեսական աճին նպաստել է գնաճի շնորհիվ: Օրինակ, հանքարդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել պղնձի արդյունահանմամբ: Սակայն, 2021 թ., 2020-ի համեմատ, ֆիզիկական ծավալով արդյունահանվել է ավելի քիչ պղնձի կոնցենտրատ, բայց քանի որ պղնձի միջազգային գներն ավելի քան 50%-ով բարձրացել էին, այն հանգեցրեց հանքարդյունաբերության աճի, որն էլ իր հերթին ազդեց տնտեսական աճի վրա: Մյուս կողմից, ռիսկային գոտում է նաև գյուղատնտեսությունը: Կանխատեսվում է, որ ՀՀ տնտեսությունը 2019 թ. տնտեսական իրավիճակին կվերադառ-

[1] Գծապատկերը մշակել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած պետական բյուջեի հաշվետվությունները, https://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/

նա 2022 թ. մայիսին, սակայն կառավարության ներկայիս քաղաքականության պայմաններում դեռևս վաղ է ակնկալել բարձր տնտեսական աճ:

Եզրակացություններ և առաջարկություններ: Վերոնշյալ տվյալների հիման վրա կատարվել է հետևյալ եզրահանգումը. կորոնավիրուսային համավարակը բացասական հետևանք է ունեցել տնտեսության բոլոր ճյուղերի վրա, իսկ ՀՀ-ի տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է առևտրի և ծառայությունների ոլորտի աճով: Ըստ այդմ՝ համավարակի պայմաններում ամենից շատ տուժեց այս ոլորտը, քանի որ միջպետական սահմանների փակ լինելու պատճառով կտրուկ նվազեց զբոսաշրջիկների թիվը, սահմանափակումների հետևանքով աշխատանքը դադարեցրին բազմաթիվ խանութներ, հանգստի և ժամանցի վայրեր, սննդի կետեր, առևտրի կենտրոններ, որոնք այս ոլորտի հիմնասյուներն են: Անկախ համավարակի ազդեցությունից՝ դրան նախորդող տարիների ցուցանիշները նույնպես բավարար չափով հուսադրող չեն գյուղատնտեսության ոլորտում: Ըստ այդմ՝ հույժ կարևոր է այս ոլորտում կառավարության կողմից իրականացվող միջոցառումների վերանայումը: Թեև 2021 թ. գրանցվել է տնտեսական աճ, այնուամենայնիվ, ՀՀ-ն չի հաղթահարել ճգնաժամը, և տնտեսությունը չի հասել այն մակարդակին, որն առկա էր մինչ համավարակը: Հարկ է ավելացնել, որ արդյունավետ չեն կառավարության իրականացրած և իրականացվող քայլերը: Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ ներդնել հատկապես գյուղատնտեսության ոլորտի արագ վերականգնման համար: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է վերանայել հակաճգնաժամային ծրագրերը՝ դարձնելով դրանք առավել թիրախային:

Օգտագործված գրականության ցանկ

1. Անանյան Ա., ԵՄ տնտեսության ճգնաժամը կորոնավիրուսի տարածման պայմաններում, «Բանբեր ՀՊՏՀ», 2021, N4, https://asue.am/upload/files/science/banber/2021-year-4/10.pdf
2. https://www.armstat.am/am/
3. https://minfin.am/hy/
4. https://banks.am/am/news/interviews/20764
5. https://www.luys.am/img/artpic/small/46d401cbcea3f84677e3Budget-2021-24-08-2021final.pdf
6. https://www.luys.am/img/artpic/small/b36a094cfc61517eb2dfStatebudget-01.07.2021.pdf
7. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149837
8. https://www.gov.am/am/covid19./
9. https://www.luys.am/img/artpic/small/9a9fe5ad401782a540d504-Covid_19.pdf
10. https://168.am/2022/02/08/1649839.html
11. https://168.am/2022/02/09/1650544.html
12. https://www.kas.de/documents/269781/0/Die+wirtschaftlichen%2C+rechtlichen+und+gesellschaftspolitischen+Ver%C3%A4nderungen+in+Armenien+aufgrund+von+COVID-19.pdf/cbab5ac9-7cb1-00e2-1e4a-4e5380280fc6?version=1.2&t=1599474150327

МАРИАМ БАДОЯН
Менеджмент, бакалавриат, 2-й курс

ПОКАЗАТЕЛИ ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ ЭПИДЕМИИ

Ключевые слова: *экономический спад, экономический рост, эпидемия коронавируса, темпы роста*

2020 год был полон сюрпризов как для Армении, так и для всего мира. Распространение эпидемии глубоко затронуло практически все сферы жизни. В экономике было много потрясений, которые не остались незамеченными. Начался глубокий экономический кризис, от чего не осталась в стороне и экономика РА. Это сопровождалось глубоким экономическим спадом. В таких условиях Правительство РА приняло соответствующие меры и реализовало антикризисные меры по восстановлению экономики. Однако мы не можем оценить все последствия эпидемии, так как она еще продолжается, но первичные последствия уже очевидны.

MARIAM BADOYAN
Management, Bachelor's Degree, 2rd Year

INDICATORS OF ECONOMIC ACTIVITY OF THE REPUBLIC OF ARMENIA IN TIMES OF PANDEMIC

Keywords: *economic decline, economic growth, coronavirus epidemic, growth rate*

2020 was full of surprises both for Armenia and the whole world. The spread of the epidemic has deeply affected almost all spheres of life. Economic shocks did not go unnoticed. A great economic crisis started, from which the RA economy was not left out. It was accompanied by the deep economic downturn. In such conditions, the RA government took appropriate measures and implemented anti-crisis measures to restore the economy. However, we can not estimate the full impact of the epidemic. It is still actual and the primary consequences are obvious.

ՍԱԹԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Տնտեսագիտություն,
բակալավրիատ, 3-րդ կուրս

OPEN BANKING՝ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Հիմնաբառեր. *open banking, մոբայլ բանկինգ, բանկային ծառայություններ, ֆինտեխ կազմակերպություններ, տեղեկատվական անվտանգություն*

Ներկայումս բանկային համակարգի առաջարկած ծառայությունները բավականին ավանդական են, հաճախ չեն համապատասխանում մեր տեխնոլոգիական դարի պահանջներին և չեն բավարարում հաճախորդների պահանջմունքները: Քանի որ շուկայում առողջ մրցակցությունը խթանում է նորարարությունը, բարձրացնում շուկայի արդյունավետությունը, մի շարք պետությունների կառավարություններ փորձել են մեծացնել ֆինանսական շուկայի ներուժը և այն համապատասխանեցնել 21-րդ դարի պահանջներին՝ դրդելով ֆինտեխ կազմակերպություններին մտնել բանկային դաշտ: Ֆինտեխ կազմակերպությունները հաճախորդներին առաջարկում են նոր, առավել ճկուն հնարավորություններ: Այդպիսի նորարարական օրինակներից է տեխնոլոգիապես բաց